ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԸ ՀՈՒՆԻՍԻ ՄԵԿԻՆ ԸՆԴԱՌԱՋ ԵՐԿՈՒ ՄՐՑՈՒՅԹ Է ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ

05.05.2018 12:11

Երեխաների պաշտպանության միջազգային օրվան ընդառաջ Փաստաբանների պալատը հայտարարում է 5-ից 15 տարեկան երեխաների նկարների (գեղանկար, մատիտանկար, լուսանկար, ցանկացած տիպի թղթային կրիչով նկար) մրցույթ՝ ԵՍ ՔՆՆԱԴԱՏՈՒՄ ԵՄ ԱՆԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆԸ թեմայով: Երեխաներն ազատ են ստեղծագործելու հարցում: Մրցույթին մասնակցող երեխաներին խնդրում ենք մինչև 2018 թվականի մայիսի 10-ը մասնակցելու վերաբերյալ հայտն ուղարկել press@advocates.am հասցեին, կամ զանգել Պալատի մամուլի խոսնակ Ծովինար Խաչատրյանին 094 536002: Էլեկտրոնային նամակում ուղղակի նշվում է երեխայի անուն ազգանունը, տարիքը, նկարի տեսակը, ինչպես նաև ուսումնական հաստատության անվանումը: Մրցութային նկարները կհավաքագրվեն ավելի ուշ:

Փաստաբանների պալատը 5-ից 15 տարեկան երեխաների համար հայտարարում է խաղաղության, ընկերասիրության, հայրենասիրության և պատասխանատվության վերաբերյալ կարգախոսների մրցույթ:

Մրցույթին մասնակցող երեխաներին խնդրում ենք մինչև 2018 թվականի մայիսի 25-ը կարգախոսներն ուղարկել press@advocates.am հասցեին: Էլեկտրոնային նամակում ուղղակի նշվում է երեխայի անուն ազգանունը, տարիքը, նկարի տեսակը, ուսումնական հաստատության անվանումը:

Հարցերի դեպքում զանգել Պալատի մամուլի խոսնակ Ծովինար Խաչատրյանին 094 536002:

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })